



Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
բեկեման, հնագետ)

ՀԱՌԻՃԱ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

առիճա վանքը գտնվում է Արթի-
կի շրջանի Հառիճ գյուղում: Գյու-
ղը սկզբնական շրջանում տեղա-
վորված է եղել ներկա վայրից քիչ
դեպի հարավ-արևելք, մի փոքրիկ
սարահարթի վրա: Հարավային և հյուսիսա-
յին կողմերից գյուղը եզերված է եղել Արա-
գածից իջնող Հառիճի և Խորունկ ձոր ձո-
րերի բարձր, անմատչելի բարավանդով,
արևելյան և արևմտյան կողմերից այդ եր-
կու ձորերի միջև ձգվում էին հաստ ամրո-
ցապատեր, որոնք շարված են խոշոր, ան-
մշակ որձաքարերով, առանց շաղախի:

Գետնի երեսին պահպանված նյութական
կուլտուրայի մնացորդները, մասնավորա-
պես կավե ամանների բազմաթիվ կտոր-
ներ վկայում են, որ գյուղը գոյություն է
ունեցել դեռ երկրորդ դարում մեր թվա-
կանությունից առաջ: Այդ բոլորը հաստա-
տում են, որ հին Հառիճը եղել է պատմա-
կան Հայաստանի ամենահնագույն և նշա-
նավոր բերդավաններից մեկը: Մինչև այժմ
էլ դեռ պահպանվել են ամրոցապատերի և
միջնաբերդի ստորին մասերը:

Թե ե՞րբ է գյուղը տեղափոխվել ներկայի
վայրը, ստույգ հայտնի չէ: այժմյան գյուղի
մեջ եղած գերեզմանոցի եզրին գտնվող Ս.
Հարություն անունով միանավ, բազիլիկ տի-
պի փոքր եկեղեցու մնացորդները, որի ճար-
տարապետական և կառուցողական ձևերը
խիստ բնորոշ են 5-րդ դարին, վկայում է, որ
գյուղը այդ ժամանակ գտնվում էր իր ներկա
տեղում: Հնագիտական հետազոտությունները

հաստատում են, որ գյուղը միանգամից չի
փոխադրվել ներկայի տեղը, նրա բնակչու-
թյան մի մասը շարունակել է մնալ նախկին
վայրում մինչև 13—14-րդ դարերը: Միանգա-
մաչն հավանական է, որ նա, ինչպես Շիրա-
կի գավառի գյուղերի մեծագույն մասը
Սաթար-մոնղոլների արշավանքների հետե-
վանքով քանդվել-ավերվել ու ամալացել է
և այլևս չի վերականգնվել:

Հառիճա վանքը Հայաստանի հոգևոր խո-
շոր կենտրոններից և կրոնա-լուսավորական
նշանավոր օջախներից մեկն է եղել ներփակ
մեծ տնտեսությամբ. բազմաթիվ ու բազ-
մապիսի կարվածքները տարածված էին ոչ
միայն Շիրակի գավառով մեկ, այլև նրա
սահմաններից հարյուրավոր կիլոմետրեր
հեռու:

Առավել հետաքրքիր ու նշանակալից են
հիմնական կառուցվածքները, — բարերի
բազմադույն ու արժեքավոր տեսակները,
խիստ մեծությունը, որ երբեմն հասնում է
մինչև 3,5 մետր բարձրության, նրանց
խիստ ողորկ մշակումը, ճարտարապետա-
կան ձևերի մտածված ու խելացի լուծումը,
կառուցողական բարձր տեխնիկան, գեղեցիկ
և նուրբ մշակված զարդանկարները, մանա-
վանդ գավթի առաստաղի վրա, — այդ բո-
լորը վանքի կառուցվածքները դասում են
հայկական արվեստի ու ճարտարապետու-
թյան հռչակապ և առաջնակարգ կոթողների
շարքը: Իսկ դրանց վիմագրությունները կա-
րեղծ նյութ են ինչպես վանքի անցյալի

պատմության, աշխատեց էլ հայ պատմագրության համար:

Քննչի գրանցից, Հառիճա վանքը բաղկացած լինելով սիգակատար՝ Արագածի փեշերին, ձորի բարձր քարափի եզրին, զեղատեսիլ վայրում, իր հովատուն կլիմայով, սառնորակ աղբյուրներով և ալպյան փարթամ բուսականությամբ՝ հագեցած երփներանգ, անուշարույր ծաղիկներով, նա հանդիսացել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հոգևոր Պետերի՝ Էջմիածնի կաթողիկոսների սիրած ամառանոցային վայրերից մեկը:

Են, թե տվյալ եկեղեցին կառուցված է 7-րդ դարում և մենաստանի ամենահին կառույցվածքն է: Այդ արձանագրությունը փորագրված է Համադասպ վարդապետի առաջնորդության ժամանակ, որը վանահայր է եղել 13-րդ դարում: Քննչի այդ, կառուցված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված արձանագրությունը փորագրված է եկեղեցուն կից հետագայում կառուցված մատուռներից մեկի վրա, որի կառուցողական ձևերը՝ բնորոշ են իրոք 13-րդ դարին: Միանգամայն ճիշտ է, որ այդ



Հառիճա վանքի նյութա-արևմտափյ

Թե նա է հիմնադրվել այդ նշանավոր մենաստանը, ստույգ հայտնի չէ: Պատմական աղբյուրները շատ աղոտ տեղեկություններ են պարունակում նրա մասին: Նրա պատմության վերաբերյալ նյութ են հանդիսանում հուշարձանների վրա եղած վիճադրությունները և հնագիտական հետազոտությունները: Որոշ բանասերներ, հիմք ընդունելով Ս. Գրիգոր եկեղեցու վրա եղած մի արձանագրությունը (արձանագրություն 2), որի համաձայն ոմն Սարգիս Ճոն կառուցել է այդ եկեղեցին, ապա նույնացնելով դրան 7-րդ դարում ապրող հայտնի Սարգիս Ճոն կրոնավորի հետ, հետևելով

եկեղեցին պատկանում է 7-րդ դարին, սակայն, ինչպես այդ կտեսներ հետո, դա հաստատվում է ոչ թե արձանագրությամբ, այլ նրա նարտարապետական ու կառուցողական ձևերով, մի հանգամանք, որը հաստատում է, որ 7-րդ դարում արդեն գոյություն ունեն Հառիճա վանքը:

Դրանից հետո ոչ մի տեղեկություն չկա վանքի մասին: Նույն Ս. Գրիգոր եկեղեցու վրա եղած մի այլ արձանագրություն հավաստում է (արձանագրություն Ա), որ վանքի առաջնորդ Գրիգորը, վանքը հարյուր տարի ավերակ մնալուց հետո, նորից վերահաստատում է այն և հավարտ մեծ

թվով միաբանություն: Արձանագրությունը տարեթիվ չունի, ստույգ հայտնի չէ նաև Գրիգորի վանահայրության ժամանակը: Հառիճա վանքի պատմությունը հետաքրքրվող համարյա բոլոր բանասերներն ու տեղագիրները հիմք են ընդունում Հառիճ գյուղում եղած մեծ գերեզմանոցի մի գերեզմանի տապանագրությունը (արձանագրություն ԻԵ), որի տարեթիվը բոլորի կողմից ընդօրինակված է ՈՂԴ (1185) թվականը և որի համաձայն դա Հառիճա վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդ Գրիգոր վարդապետի գերեզմանն է: Դա պարզապես թյուրիմացություն է, որովհետև հիշյալ գերեզմանի տապանագրության տարեթիվը ոչ թե ՈՂԴ (1185), այլ ՌՄԻԲ (1773) թվականն է: Բացի այդ, տապանագրության մեջ որոշակի ասված է, որ նա վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդն է. իսկ նախորդ արձանագրության մեջ ասվում է, որ վանքը հարյուր տարի ամայի մնալուց հետո նա վերաշինում-շինացնում է: Պարզ է, որ դա վանքի առաջին ամայացումն է և ոչ թե երկրորդը, ուստի Գրիգոր անունով առաջնորդները՝ մեկը արձանագրության մեջ, իսկ մյուսը՝ տապանագրության, տարբեր մարդիկ են:

Առաջին Գրիգոր վանահոր անունով միայն մի արձանագրություն կա, որի մասին հիշվեց վերևում: Վանքի մյուս վիմագրությունները սկսում են ՈԻԵ (1176) թվականով, երբ առաջնորդ էր Պետրոս վարդապետը: Սրանից որոշ չափով պարզ է դառնում, որ Պետրոսին պետք է նախորդած լինի վերը նշված Գրիգորը: Միաժամանակ, ինչպես հայտնի է, թյուրք-սելջուկյան արշավանքների, հատկապես Շիրակի վրա, տեղի են ունեցել 1064, 1072, 1093 թվականներին, որոնց ընթացքում ավերվում էին բնակավայրերը, կողոպտվում էին բնակիչները և մեծ մասամբ գերի վարվում: Հենց այդ ժամանակ, մեր կարծիքով, 1064 թվականին, այսինքն առաջին արշավանքի ժամանակ, որն ավելի խիստ է եղել, պետք է ավերված ու ամայացած լինի նաև Հառիճա վանքը: Այս հարյուր տարի ամայի մնալուց հետո, վերաշինվում ու հաստատվում է Գրիգոր վարդապետի կողմից, որին հոջորդում է Պետրոս վարդապետը: Այդ շրջանում, բացի Ս. Գրիգոր Լուսավորիչ և կեղեցուց, ուրիշ ի՛նչ կառուցվածքներ կային վանքում, ստույգ հայտնի չէ:

Այնուհետև Ս. Աստվածածին եղեկեղեցու վրա եղած երկու արձանագրությունները (արձանագրություն Ը և Թ) պատմում են Հառիճա վանքում կատարվող կառուցումների մասին: Հատկապես հետաքրքիր ու

արժեքավոր է երկրորդ արձանագրությունը, որի համաձայն Զարաթն սպասալարը փողով գնում է Հառիճա վանքը իր ամբողջ սահմաններով նրա նախկին տերերից (հավանաբար Պահլավունիներից, որովհետև այդ ժամանակ Շիրակը կազմում էր Պահլավունյաց իշխանների սեփականությունը) և 1201 թվականին, նույն Պետրոսի առաջնորդության ժամանակ, կառուցում է Ս. Աստվածածնի հոյակապ եկեղեցին ու մի շարք կալվածներ նվիրում վանքին: Այդ կալվածների թվում հիշատակվում է նաև իր սեփական գյուղը՝ Սառնաղբյուր, որը շատ մոտ էր գտնվում վանքին: Հնագիտական հետազոտությունները հաստատել են, որ Սառնաղբյուր գյուղը գտնվում էր վանքից քիչ դեպի հարավ, ձորի ձախ ափին, ընդարձակ սարահարթի վրա, որի գերեզմանոցը և շենքերի ավերակների մնացորդները ընդարձակ տարածության վրա պահպանվել են մինչև այժմ:

Դրանից հետո, վահրամ Հեճուլ իշխանը կառուցում է այնքան հետաքրքիր ու արժեքավոր դավիթը կամ ժամատունը՝ Պետրոսին հաջորդող Հովհաննես վարդապետի առաջնորդության ժամանակ, հավանաբար 13-րդ դարի առաջին քառորդի վերջերին կամ երկրորդ քառորդի սկզբներին, ինչպես այդ երևում է ժամատան վրա եղած մի արձանագրությունից (արձանագրություն ԺԳ):

Ըստ վանքի վիմագրությունների, Պետրոսի առաջնորդության ժամանակ փորագրված արձանագրությունների վերջին տարեթիվը ՈԿԳ (1214) թվականն է: Պետրոսին հաջորդող Հովհաննես վարդապետի առաջնորդության ժամանակ փորագրված արձանագրությունների վերջին տարեթիվը ՈԶԴ (1224) թվականն է, իսկ Հովհաննեսին հաջորդող Համազասպ վարդապետի առաջնորդության ժամանակ փորագրված արձանագրությունների վերջին տարեթիվը ՈԶԴ (1235) թվականն է:

Դրանից հետո ոչ պատմական աղբյուրներ և ոչ էլ վանքի վիմագրությունները ոչ մի հիշատակություն չեն պարունակում Հառիճա վանքի մասին մինչև 18-րդ դարը: Ինչպես հայտնի է, 1235 թվականին սկիզբ են առնում թաթար-մոնղոլական արշավանքները, որոնք ամայություն հասցրին երկրրը, այդ թվում նաև Հառիճ գյուղն ու Հառիճա վանքը:

Մոնղոլների տիրապետությունից հետո պարսիկները նորից վերագրավում են Հայաստանը 16-րդ դարի վերջերին: Հաջորդ 17-րդ դարում Մովսես և Փյոնկյուս կաթողիկոսների ժամանակ վերականգնվում և գործել են սկսում մի շարք վանքեր, սա-



Հատինա վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատը

կայն, ինչպես երևում է, այդ ժամանակ Հատինա վանքը մնում է նույն ամալի ու լրված վիճակում:

Հատին գյուղի մեծ գերեզմանոցում եղած մի գերեզմանի տապանադրությունը հավաստում է, ինչպես այդ մասին խոսվեց վերևում, որ այդ գերեզմանում հանգչում է Հատինա վանքի երկրորդ վերաշինության տառջին առաջնորդ Գրիգոր ծերունի վարդապետի աճյունը: Տապանադրությունն ունի ՌՄԻԲ (1773) թվականը: Այդ տապանադրությունից կարելի է հավաստել, որ Հատինա վանքը պետք է վերականգնված լինի ոչ շուտ քան 18-րդ դարի կեսերին միայն, այսինքն այն ժամանակ, երբ Արևելյան Շիրակը գտնվում էր Վրաստանի տիրապետության տակ:

Հավանաբար հենց այդ ժամանակներին էր, որ Վրաց Հերակլ թագավորը Վերին Շիրակը նվիրում է Ղահրաման սուլթան անունով մի պարսկի, սրն իր բնակությունը հաստատում է Արթիկ գյուղում:

Ներսես Ե Աշտարակեցին, զբանից հետո, մի գրութվամբ տեղեկացնում է, որ ինքը դեռ սարկավազ եղած ժամանակ, Ղուկաս կաթողիկոսի օրոք, 1789 թվականին այ-

ցելում է Հատինա վանքը: Աշտարակեցին նույնպես հայտնում է, որ Շիրակը գտնվում էր մահմեդական տիրապետության տակ և որ կառավարիչը նստում էր Արթիկ գյուղում: Ապա նա ավելացնում է, որ շնչած վանքն ունեի և միաբանություն, բայց գտնվում էր քայքայված և աղքատ վիճակում:

Այդ գրության մեջ էր Հատինա վանքը, երբ 1795 թվականին սկսվում են Աղա Մահմեդ խանի արշավանքները Շիրակի վրա: Ղահրաման սուլթանը, տեսնելով մոտավորապես վտանգը, ապաստանում է Հատինա վանքում, նախօրոք կարգի է բերում վանքի ամուր պարիսպները, որոնք շինված էին Զարարի սպասարարի կողմից, զեռ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցելու ժամանակ, դավթի և Ս. Գրիգոր եկեղեցու տանիքներին կառուցում է պաշտպանողական աշտարակներ, իսկ գերեզմանոցում եղած Ս. Հարություն եկեղեցին, շնորհիվ իր բարձր դիրքի, դարձնում է դիտակետ:

Աղա Մահմեդ խանը իր զորավար Քյալբալային ուղարկում է Ղահրաման սուլթանի վրա, որը պարսության մատնելով վերջինիս, բանդում է վանքի պարիսպ-ամրոցապատերը, Ս. Հարություն եկեղեցին և տանիքներին կառուցված աշտարակները: Աղա Մահմեդ խանի արշավանքները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին: Դրան հաջորդեցին Հասան խանի արշավանքները, որոնց ընթացքում ամրոց Շիրակի գյուղերը բանդվեցին ու ավերվեցին, բնակչությունը ավարառության ենթարկվեց և մասամբ կոտորվեց, կենդանի մնացածները թողին իրենց բնակավայրերը և գաղթեցին օտար երկրներ: Վանքերը, որոնց թվում նաև Հատինա վանքը, ամառացան:

Ականատեսների պատմածով ամրոց Շիրակն ամալի էր, միայն Հոռոմ գյուղում կային մի քանի տուն բնակիչներ: Հատինա վանքն ամալի էր, նրա շենքերն օգտագործվում էին թյուրք և քուրդ բեկերի ու խաների կողմից որպես ոչխարների հոտերի փարախ: Անասունների աղբը կուտակված էր բակում, եկեղեցիների պատերին կից, որոնք հասնում էին մինչև լուսամուտների բարձրությանը, երբեմն էլ մինչև տանիքի հատասար:

Հաջորդ տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ուսա-պարսկական և ուսա-տաճկական պատերազմների ժամանակ պարսիկներն ու տաճիկները պարսություն կրեցին: 1827 թվականին ուսաական հաղթական բանակի զորամասերը դուրս եկան Ախուրյան գետի ձախ ափը, իսկ հաջորդ տարվա սկզբներին գրավեցին Նրևանը: Պատերազմը վերջացավ ուսաների հաղթանակով: Կնքված

հաշտության պայմանագրերով նախատեսվում էր, որ ռուսական նոր սահմանի սահմանակից պարսկական ու տաճկական մարզերից թուլյատրվում է հայ բնակչությանը փոխադրվել ռուսական սահմանները: 1829, 1830 թվականներին Արևելյան Շիրակ փոխադրվեցին Կարսի գաղթականները: Նույն տարին Հառիճա վանքը փոխադրվեց Հոռոմոսի վանքի միաբանությունը, իր հետ բերելով վանքի սպասներն ու հանդերձանքը: Սկսվեցին վանքի մաքրման, բարեկարգման ու վերակառուցման աշխատանքները, միաժամանակ վերականգնվեց բայբալված տրետեսությունը:

1850 թվականին կազմակերպվում է վանական հատուկ միաբանություն, որը եռամյակում աշխատանք է ծավալում մենաստանը վերաշինելու, ընդարձակելու և տնտեսապես ուժեղացնելու ուղղությամբ: Կես դար տևող իր գործունեության ընթացքում միաբանությունը Հառիճա վանքը հասցնում է իր ծաղկման ու բարդավաճման ամենաբարձր աստիճանին: Այդ ժամանակաշրջանում է, որ հիմնովին վերանորոգվում են եղած կառուցվածքները, կառուցվում են վանքի միաբանության համար բազմաթիվ քարաշեն, երկ-

հարկանի կացարաններ, մառաններ, շտեմարաններ, խոհանոց, սեղանատուն, հացթխարան, անասնադոմեր, և որ զլխավորն է հատուկ դպրոցի և կաթողիկոսների առանցքի շենքեր և այլն, վանքը շրջապատվում է բրգավոր բարձր պարիսպներով, նորից ձեռք են բերվում բազմաթիվ կալվածներ: Հառիճա վանքի հիշված դպրոցում սովորող շատ սաներ հետագայում դարձան հասարակական ու մշակութային աշխի ընկնող գործիչներ: Այդ դպրոցում է իր նախնական կրթությունն ստացել նաև հայ բանաստեղծական խոսքի վարպետ, մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:

20-րդ դարի սկզբներին վանքը, զրկվելով իր տնտեսական միջոցներից, դադարում է մենաստան լինելուց: Այդ ժամանակից նա մնում է սոսկ որպես գյուղական եկեղեցի:

Հառիճա վանքի մասին հրատարակված են բազմաթիվ աշխատություններ և ճանապարհորդական նկարագրություններ¹, սակայն այդ բոլոր աշխատություններում ևս կան նկատելի անճշտություններ ու սխալներ, մանավանդ վիճադրությունների ընդօրինակման և վերծանման ուղղությամբ:

2. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ (ԱՌԱՆՁԻՆ ԾԵՆՔԵՐԻ) ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հառիճա նշանավոր վանքի հուշարձանների խումբը բաղկացած է երկու եկեղեցուց, երկու գավիթ-ժամատնից, երկու մատուռից, վանական միաբանության բազմաթիվ կացարաններից և մի շարք այլ հասարակական կառուցվածքներից, պարսպապատից: Վանքն սնեցել է իր հատուկ գերեզմանատունը:


Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի.— Վանքի ամենահին կառուցվածքն է: Կառուցման ժամանակն և կառուցողները ստույգ հայտնի չեն, ճարտարապետական և կառուցողական ձևերը խիստ բնորոշ են 7-րդ դարին: Հավանաբար կառուցած լինեն Կամսարական իշխանները, որոնց սեփականությունն էր կաղմում, այդ ժամանակ, ամբողջ Շիրակը:

Կենտրոնացված փոքրիկ շենք է, խաչաձև հատակագծով: Խաչքենն արտաբուսական հնգակող են, ներսից՝ կլոր: Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է, որի առջև հետագայում կառուցված է փոքրիկ զանգակատուն: Հյուսիսային կողմում ժամատուն կառուցելու կապակցությամբ մի փոքրիկ մուտք ևս բացված է հյուսիսային խաչքենից, որը տանում է դեպի ժամատունը: Հարավային և արևելյան խաչքենների միացման անկյունում, արտաբուստ ավելացված է մի փոքրիկ, սովորական խորան, որի դուռը բացվում է հարավային խաչքենի մեջ: Նման մի երկհարկանի խորան-մատուռ ավելացված է հարա-

վային և արևմտյան խաչքենների միացման արտաքին անկյունում, որը, ինչպես ցույց է տալիս վրայի արձանագրությունը, կառուցել է Սարգիս Շոնը 13-րդ դարում: Ամբողջ շենքը շարված է սև ու կարմիր տուֆի մաքուր տաշված մեծ քարերով՝ կրաշաղախով մածուցված:

Ս. Աստվածածին եկեղեցի.— Վանքի զբլխավոր եկեղեցին է, կառուցել է Զարաթի սպասալարը 1201 թվականին: Ընդարձակաժավալ մեծ շենք է, բարձր ու լայնանիստ զմբեթով: Հատակագիծը արտաբուստ երկաթածիլ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից՝ յուրաքանչյուր անկյունում կառուցված խորանները հատակագծին տալիս են խաչաձև տեսք: Խորանները երկհարկանի են, արևմտյան կողմի վերի հարկի խորանները սրահաձև են՝ սյունադարձ, կամարակաղ,

1. Հ. Գ. Ալիշան, «Շիրակ», Վենետիկ, 1881 թ.— Ա. Մխիթարյան, «Պատմություն մենաստանին Հառիճայ», Քիֆլիս, 1856 թ.— «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշվետվությունը», Ալեքսանդրոպոլ, 1910 թ.— Մ. Բժշկյան, «Ճանապարհորդություն ի Լեհաստան», Վենետիկ, 1830 թ.— Ս. Զալալյան, «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», Ա. Քիֆլիս, 1842 թ.— Հ. Եսայան, «Ստորագրություն...», հատ. Բ, էջմիածին, 1842 թ. և այլն:



Հատինա վանքի զավթի ներքին տեսարան

ուր բարձրանում են սառնին հարկի խորաններին կից 12 սառնիճան ունեցող քարե սանդուխներով: Խորանների այդպիսի լուծումը եղակի դեպք է հայկական ճարտարապետության մեջ: Նկեղեցու բարձր բնձր մշակված կիսակլոր արսիդի ձևով գտնվում է արևելյան խաչվանդ:

Արտաբուստ հարավային, արևելյան և հյուսիսային պատերի մեջ կան երկուական եռանկյունաձև մեծ խորշեր: Արևելյան ճակատի վերի մասում, պատի մեջ ագուցված է Զարարե և Խյանե եղբայրների ամբողջական, մեծադիր բարձրաքանդակը: Ամբողջ շենքը կառուցված է վառ մանիշակագույն մարմար հեղված խոշոր քարերով: Ճակատների և դմբեթի թմբուկի լուսամուտները պսակված են գոսակավոր շրջանակներով: Գմբեթի վեղարը զարդարված է ծոպերով, իսկ քիվերը պատած են ծաղիկ-հյուս դարձաբանդակներով: Միակ գեղեցիկ շրջանուտը արևմտյան կողմից է, որը բացվում է ժամատան մեջ: Այդ բոլորը միասին էլ ավելի վեհություն և գեղեցկություն են տալիս եկեղեցուն:

Դավիթը կամ ժամատունը գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, կից, և իր մեջ է առել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային խաչվանդ: Կառուցել է Վահրամ Հեճույ իշխանը 13-րդ դարի առաջին կեսում: Հատակագիծը համարյա բառա-

կուսի է, հիմնված է չորս հաստահեղույս ամբողջական և ութ կիսասյունների վրա, որոնց բնին ամբողջական խոշոր դռաններ են և ունեն նույնպես ամբողջական մեծ քարերից զեղարանդակ խարխուլներ ու խոչակներ: Սյուները և կիսասյուները միանում են կամարներով կաղմելով թաղակապ ծածկը, կենտրոնում հատուկ քառակուսի անցքով՝ երդիկով: Այդ հուշարձանի կառուցվածքում, բացի հատակագծային և շինարարական հանրահայտ ձևերից, որոնք հատուկ են 13-րդ դարի այդ տիպի շենքերին, բնորոշ և շատ հետաքրքիր են առաստաղի վրա քանդակված տարրեր ձևերի նուրբ մշակված դարձերը:

Շենքի երեսապատը կապտագույն բազալտի սրբատաշ խոշոր քարերից է, կրաշաղախով մածուցված: Միակ մուտքն արևմտյան կողմից է, մոզաիկաձև մշակված տիմպանով (ճակատ): Արտաբուստ, հարավային պատի արևելյան ծայրում ավելացված են մատուռի ձևով երկհարկ խորաններ. զեպի վերին հարկի խորանը բարձրանում են արևելյան պատին կից կառուցված տասնմեկ սառնիճան ունեցող քարե սանդուխտով:

Ներքուղ զավթը գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային կողմում, ավերակ վիճակում: Պահպանվել է հյուսիս-արևմտյան անկյան մասը՝ մեկ սյունը և դրա զիմաց հյուսիսային ու արևմտյան պատերին կից մեկական կիսասյուներով: Թեև երբ է կառուցվել այդ զավթը և որո՞նք են եղել նրա կառուցողները, ճիշտ հայտնի չէ: Պահպանված մնացորդները և քանդված մասերի հետքերը հնարավորություն են տալիս ենթադրելու, որ այն կառուցված է եղել զավթների ավանդական հատակագծային և կոնստրուկտիվ ձևերով, հավանաբար 12-րդ դարում՝ վանքը սելջուկյան արշավանքների ընթացքում ավերվելուց հետո վերականգնման ժամանակամիջոցում: Գավթի հյուսիսային պատը հիմնված է բնական ժայռի վրա, որի արևելյան ծայրում, պատի հյուսիսային կողմում, քարաշերտի մեջ փորված է մատուռի նմանություն մի փոքրիկ խորան. վերջինիս մուտքը հարավային կողմից է և բացվում է Գավթի մեջ:

Մատուռը գտնվում է վանքի հուշարձանների խմբի արևմտյան կողմում, ձորի քարափի եզրին: Ժամանակի ընթացքում քարափից մի մեծ ժայռաբեկոր անջատվելով ափից, աստիճանաբար հեռացել է, իր հետ տանելով հիշյալ մատուռը: Անկասկած է, որ ափից անջատված այդ ժայռաբեկորը բնական կերպով պետք է հետզհետե հեռանա և մի օր դուրսի ձորը, մատուռի հետ միասին: Ներկայումս անջատված այդ ժայռաբեկորն այնքան է հեռացել ձորափից, որ դեպի մատուռը գնալ հնարավոր չէ: Մատուռը փոքր է, սովորա-

կան ձևով կառուցված. մուտքը հյուսիսային պատից է: Իր կառուցման ձևով բնորոշ է 12-րդ դարին, ուստի նա կառուցված պետք է լինի երկրորդ գավթի հետ միաժամանակ:

Մի ուրիշ, ավելի փոքր մատուռ է պատկերվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային կողմում, եկեղեցու և ավերակ գավթի արանքում: Այդ մատուռը նույնպես պետք է կառուցված լինի 12-րդ դարում:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային և ավերակ գավթի հյուսիսային պատերի վրա պահպանված կրաշաղախի հետքերը ենթադրել են տալիս, որ այդ երկու հուշարձանների արանքում եղել է ինչ-որ կառուցվածք, որն այժմ գոյություն չունի:

Վանական միաբանության կացարանները, կարողիկոսական ամառային շենքեր, մյուս հասարակական կառուցվածքները գտնվում են վանքի եկեղեցական խմբի հյուսիսային-արևմտյան կողմում, պարսպից ներս: Բոլոր այդ շենքերն էլ երկհարկանի են, շարված վարդագույն տուֆի տաշված քարերով, կրաշաղախով, որոնք բոլորն էլ ունեն թաղակապ ծածկ: Վերին հարկերում սենյակներ են, մեծ լուսամուտներով, որոնք հանդիսանում են վանական միաբանության անդամների կացարանները, կաթողիկոսների ամառանոցը, դպրոցը, հյուրատունը և այլն, իսկ ստորին հարկերը ծառայել են որպես մասնա, ամբարներ, սեղանատուն, հացթխատուն-խոհանոց, անասնադոմեր և այլն: Բոլոր այդ շենքերը կառուցված են 1850—1890 թվականներին:

Պարխալը շրջափակում է վանքի բոլոր կառուցվածքները. նրա արևելյան մասը կառուցված է Զաքարի սպասալարի կողմից, Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումից անմիջապես հետո, 13-րդ դարի սկզբներին. շարված է կիսատաշ մեծ քարերով, կրաշաղախով, որի վերին մասերը քանդված են: Պարխալի հյուսիսային մասը կառուցված է վանական միաբանության կացարանների և մյուս հասարակական շենքերի հետ միասին՝ 19-րդ դարի երկրորդ կեսում: Այդ մասը շարված է վարդագույն տուֆի տաշված քարերով, կրաշաղախով, և կանգուն վիճակում է:

Երկու կարգի պարիսպներն էլ անկյուններում ունեն բրգաձև աշտարակներ:

Վանքի գերեզմանոցը գտնվում է պարսպից դուրս, գյուղամիջում, բարձրագույն վայրում, որն ընդհանուր է եղել նաև գյուղական համայնքի ննջեցյալների համար: Բոլոր գերեզմանաքարերը կարմիր տուֆից են, զանազան ձևերով մշակված՝ յուրաքանչյուրն իր դարին համապատասխան: Գերեզմանոցում կան բազմաթիվ մահարձաններ: Որպես տապանաքար օգտագործված են նաև հին շենքի բեկորներ, առանձին խաչքարեր ու նրանց բեկորները, քառակող կոթողներ, վերջիններս բնորոշ են 5—6-րդ դարերին: Տապանաքարերի մի մասը պատած են զարդաքանդակներով ու կենցաղային բնույթի պատկերներով: Ոմանք ունեն տապանագրություններ 12-րդ, 13-րդ, 18-րդ և 19-րդ դարերի թվականներով:

Այդ գերեզմանոցում առանձնապես հետաքրքիր է Ս. Հարություն եկեղեցին: Սա միանավ բազիլիկ ոճով կառուցված փոքր շենք է, որը բնորոշ է 5-րդ դարին: Արևելյան կողմում ունի կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերում կան խորաններ: Միակ մուտքը արևմտյան կողմից է. պատերի մեջ, արտաքուստ, կան երկուական եռանկյունաձև խորշեր: Որոշակի կերպով նկատվում է, որ եկեղեցին հիմնական վերակառուցման է ենթարկվել 10-րդ դարում: Ինչպես հայտնի է, այդ եկեղեցին ավերեց Աղա Մահմադ խանի զորավար Քյալբալայը 1795 թվականին, իր արշավանքների ժամանակ:

Հառիճա վանքի նկատմամբ խիստ բնորոշ է մի հանգամանք. այդ այն է, որ երբ մյուս բոլոր վանքերում, ինչպես վանական միաբանության անդամներից ոմանք, այնպես նաև վանքին նվիրատվություն արած որևէ անձնավորություն թաղվում էին վանքի բակում: Բացի դրանից, գավթիները կամ ժամատները հանդիսացել են մի տեսակ պանթեոն՝ վանքը կառուցող իշխանական տոհմի և վանքի քարձրաստիճան հոգևորականության համար: Հառիճա վանքը այդ տեսակետից բացառություն է կազմում— նրա ոչ բակում և ոչ էլ գավթի-ժամատնում ոչ մի թաղում չի նկատվում:

(Շարունակելի)